



## ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ

ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՌ ԿԵՐԼԱ ՀԱՅԱՔԲԱՂԱՎԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՈՂ  
ԳՈՆԴԱԲԱՏՎԱՂԵՑՈՒ աղքային թերթին խմբագրութիւնն որոշած է,  
ինչպէս ծրարեալ թայտարարութենէն կ'իմանանք, առաջիկայ  
տարին նաև հայերէն լեզուա « Յաւելուած » մը հրատարակել.  
Այս « Հունդարիա Յաւելուած » թերթն երկու ամիս մէյմը պիտի  
հրատարակուի 16 երես (մեծ ութածալ) ծաւալով. պիտի բովան-  
դակէ հունդարերէնթերթին նախորդ երկու թուերու այն մասանց  
թարգմանութիւնն, որոնք կը իսոսին լեհաստանի և Հունդարիոյ  
աղքանց գրայ: Այս եղանակաւ նոյն հայ գաղթականութեանց  
սեպհական գործին պիտի ըլլայ, որ ընդհանուր աղքին մատչելի  
լեզուաւ պիտի ծանօթացընէ ինք զինքն:

Թերթին տարեկան բաժանորդագինն է՝ կանխիկ վճարելի, 5  
ֆուանք:

Խմբագրութիւնն առ այժմ կը խնդրէ՝ որ աղքայինք հաճին առ  
անագան մինչև Նոյեմբերի վերջերը (ն. տոմ): յայտնի 1. Թերթը  
գրաբար թէ աշխարհաբար (Տաճկահայոց բարբառով) գրուի. և  
2. կը հաճին բաժանագրուիլ վերջնական որոշումն այս հարցմանց  
փութով պատասխանելէն կախուած է: . . .

Մենք լիուլի համակրելով Յարդելի Խմբագրութեան ձեռնար-  
կութեան՝ կ'առաջարկենք աշխարհաբար և ըստ մասին տեղական  
բարբառով խմբագրել թերթը: կը մաղթենք մեծ յաջողու-  
թին: . . .

Թերթի խմբագրութեան դիմելու է հետեւեալ հասցէով. Szongott  
Kristof urnak. Szamosújvar (Hongrie):

(Հանդէս ամսօրեայ)